ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «27» նոյեմբերի 2020թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 54-Ա[1]

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՉԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի պետի (ծածկագիր՝ 18-1-27.2-Ղ4-2) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Հարություն Սարգսյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հարություն Հրաչիկի Սարգսյանին 2020 թվականի նոյեմբերի 30-ից նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի պետի (ծածկագիր՝ 18-1-27.2-Ղ4-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Հ. Սարգսյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1.1-րդ մասի պահանջներին համապատասխան:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ
(պարտականությունները կատարող)